

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում
լրացումներ կատարելու մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության
մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վճարահաշվարկային
համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում
լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Արժույթային կարգավորման և
արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության լրացում
կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Նախագծի ներկայացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 71-րդ կետով:

2015 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 49-րդ լիազումար նիստում հաստատվել է ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությամբ արձանագրվել են մի շարք խնդիրներ և բացեր, այդ թվում՝ հանցագործների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից մի շարք ֆինանսական հաստատությունների կապիտալում նշանակալից մասնակցություն կամ վերահսկիչ բաժնեմաս ունենալը (կամ այդպիսի մասնակցության կամ բաժնեմասի իրական շահառու լինելը), կամ ֆինանսական հաստատությունում կառավարման գործառույթ կատարելը կանխելուն ուղղված անհրաժեշտ իրավական կամ կարգավորման միջոցների բացակայությունը:

Մասնավորապես՝ Հաշվետվությամբ 26-րդ հանձնարարականի 26.3-րդ չափորոշին ՀՀ օրենսդրության համապատասխանության գնահատման շրջանակներում նշվել է, որ՝

«266.«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը և «Վճարահաշվարկային համակարգերի և կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը չեն ներառում համապատասխան դրույթներ՝ կանխարգելելու համար հանցագործների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից նշանակալից կամ կառավարման իրավունք տվող մասնակցության (ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10%) ձեռքբերումը կամ իրական շահառու հանդիսանալը, կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելը այնպիսի ՖՀ-ներում, ինչպիսիք են ապահովագրական միջնորդները և վճարահաշվարկային կազմակերպությունները:»,

«267. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքը և «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը չեն ներառում բաժնետերերի և ղեկավարների համապատասխանության

վերաբերյալ դրույթներ այն անձանց համար, որոնք նման դիրք են զբաղեցնում նշված ընկերություններում:»¹:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Խնդրի էությունն այն է, որ ԿԲ կողմից լիցենզավորվող որոշ սուբյեկտների համար նախատեսված չեն դրանց ղեկավարների և նշանակալից մասնակիցների նկատմամբ հանցագործության համար դատվածություն չունենալու վերաբերյալ պահանջներ:

Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Կարգավորումների նպատակն է կանխարգելել հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձանց մուտքը ֆինանսական կազմակերպություններ:

Փոփոխությունների արդյունքում գրավատան, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական միջնորդների, արժույթային գործառնություններ իրականացնող անձանց նշանակալից մասնակիցներն ու ղեկավարները չեն կարող լինել հանցագործության համար դատվածություն ունեցող անձինք:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Զավադյան

1

https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Evaluation%20Reports/mutual_evaluation_report_fifth_arm.pdf , է Զ216